ISSN 1829 - 1864



2010 ապրիլ-հունիս թիվ 2 (30)

համահայկական հանդես

ՎԵՄ

VEM Pan-Armenian Journal

Dikran Mesrob Kaligian, Armenian Organization and Ideaology under Ottoman Rule, 1908-1914, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, (New Brunswick, USA and London, UK: Transaction Publishers), 2009, 260 p:*

Գրասեղանիս վրայ դարսուած եւ ընթերցմանս սպասող գրքերի դէզից դուրս քաշեցի Տիգրան Մ. Խալիկեանի «Armenian Organization and Ideaology under Ottoman Rule, 1908-1914» (Հայ կազմակերպութիւն եւ գաղափարախօսութիւն օսմանեան տիրապետութեան ներքոյ, 1908-1914) անգլերեն աշխատութիւնը՝ հենց սկզբից նպատակ ունենալով թէ՛ կարդալ եւ թէ նիւթ պատրաստել՝ հայերէնախօս ընթերցողին: Գրքին նախասիրութիւն տալուս պատճառը նիւթի կարեւորութիւնն էր եւ այդ նիւթի շուրջ ցայժմ բացակայ հիմնարար գիտական ուսումնասիրութիւնը:

Դոկտ. Տիգրան Խալիկեանը, երիտասարդ պատմաբան, վկայուած է Բոստոն քոլեջից: Նա դասախօսել է Քլարք համալսարանում, Ռիջըս քոլէջում եւ մի քանի այլ կրթական հաստատութիւններում: Նախագահում է Արեւելեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբին եւ անդամ է համա-ամերիկեան Հայ Դատի Յանձնախմբի վարչութեան, Ուաշինկթընի: Եղել է Armenian Review-ի վարչական խմբագիր եւ շարունակում է գործուն մասնակցութիւն բերել Հայոց Ցեղասպանութեան ուրացման դէմ տարուող աշխատանքին:

Սովորութեանս համաձայն նախ մատենագրութիւնն ու օգտագործուած աղբիւրները աչքի անցկացրի: Նիւթերի հարուստ ցանկ՝ ՀՅԴի, Անգլիայի, Գերմանիայի եւ ԱՄՆի արխիւներից, հրատարակուած փաստաթղթեր, երկրորդական աղբիւրներ, բազմաթիւ գրքեր եւ պարբերականներ: Տպաւորիչ է: Գիտական լուրջ ուսումնասիրութեան հետ է գործս: Իսկ գրքի շապկի ներսի մասում եկող ծանօթութիւնը ներկայացնում է էական հարցը, որ այն օրերին Դաշնակցութեան դէմ ծառացած անյաղթահարելի հարցն էր՝ շարունակե՞լ համագործակցութիւնը, երբ Երիտթուրքերը (Իթթիհատ վե թերաքգը Կոմիտէ - այսուհետ՝ Իթթիհատ) անտարբերութեամբ մերժում էին կատարել հայերին, կամ այս պարագայում՝ Դաշնակցութեանը տուած խոստումները. կամ՝ խզել յարաբերութիւնները եւ կորցնել սահմանադրական կառոյցի հնարաւոր յաջողութեանը սատարելու ամէն առիթ: Գիտենք որ յարաբերութիւնները վերջիվերջոյ խզուեցին, բայց ո՞ւր կտրուեց թելը, ինչո՞ւ կտրուեց եւ ի՞նչ եղաւ արդիւնքը: Հեղինակը խոստանում է իր պատասխանները ներկայացնել գիտահետազօտական լուրջ փաստարկութեամբ:

Աշխատութիւնը սկսվում է ծանօթութիւն/նախաբանով, ուր Խալիկեանը հա-

* Ընդունվել է տպագրության 20.06.2010:

մառօտ գծերով ներկայացնում է հայ ժողովրդի պատմութիւնը օսմանեան տիրապետութեան ներքոյ՝ միլլեթ սիստեմից մինչեւ ՀՅԴ եւ Հնչակեան կուսակցութիւնների համագործակցութիւնը թուրք եւ քուրդ այլախոհ մտաւորականների եւ խմբակցութիւնների հետ, ներառեալ Իթթիհատը: Նպատակը՝ Օսմանեան կայսրութեան մէջ սահմանադրական օրէնքների վերահաստատում, քաղաքացիների, նաեւ փոքրամանութիւնների, հաւասարութիւն եւ արդարութիւն, քաղաքական, ընկերային եւ տնտեսական բարենորոգումների իրականացում: Ապա հեղինակը հպանցիկ հայեացք է նետում 1908-ի յեղափոխութեան եւ յետադիմականների հակայեղափոխական գործունէութեան վրայ: Այս վերջինի արդիւնքում էր որ տեղի ունեցաւ 1909-ի Ադանայի ջարդը, որի ընթացքում յստակ էր Իթթիհատի անտարբերութիւնն ու չկամութիւնը միջամտելու եւ ջարդը կասեցնելու: Ուշացումով ուղարկուած բանակն էլ, հայերին պաշտպանելու փոխարէն, վերսկսուած ջարդի մասնակիցը դարձաւ: Այդ իրադարձութիւններից յետոյ էր, որ Դաշնակցութիւնը երկընտրանքի առջեւ կանգնեց՝ շարունակե՞լ, թէ՞ կտրել կապը:

Յաջորդ գլուխներում Խալիկեանը պիտի եզրակացնէր, որ սահմանադրական վարչակարգի առաջին ինն ամիսները աւարտուեցին դեռ աւելի վայրագ արիւնահեղութեամբ: Եւ իրօք, օսմանեան քաղաքացիների հաւասարութիւնը չարգիլեց հայասպանութիւնը: Դէպքերի զարգացման լոյսի տակ, Դաշնակցութիւնը պիտի վերարժեւորէր Իթթիհատի հետ իր համագործակցութիւնը[1]: Դրանով հանդերձ - Վահան Փափազեանից մէջբերելով Խալիկեանը գրում է, որ Իթթիհատի մի շարք պաշտօնատարներ փորձում էին համոզել Դաշնակցութեանը, թէ նոր վարչակարգը դեռ իր արմատները չի ամրապնդել եւ մեծ է յետադիմական տարրերի ազդեցութիւնը երկրում: Նրանք վստահեցնում էին, թէ Իթթիհատը վճռել է աւելի հատու միջոցներով պայքարել եւ յոյս ունի որ կունենայ Դաշնակցութեան համագործակցութիւնը[2]:

Ուրեմն՝ Դաշնակցութիւնը յարմար նկատեց շարունակել կապը եւ որոշումը հրապարակուեց Բիւրոյի յայտարարութեամբ: Հրապարակուեց նաեւ Իթթիհատի հետ միացեալ յայտարարութիւն, ուր շեշտւում էր, թէ համագործակցութիւնը պիտի շարունակուի արգիլելու համար ապագայ հակայեղափոխական դրսեւորումները: Ի պատասխան մի շարք թուրք ղեկավարների, միացեալ յայտարարութիւնը ընդգծում էր այն պարագան, թէ Դաշնակցութիւնը Հայաստանի անկախութեան չի ձգտում, սակայն երկու կողմերն էլ կարեւորում են հայկական նահանգներում բարենորոգումների անհրաժեշտութիւնը: Խալիկեանը յիշեցնում է, որ Դաշնակցութիւնը համաձայն էր կայսրութեան տարածքային ամբողջութեանը, որի մէջ նաեւ Արեւմտեան Հայաստանը ի հարկէ՝ ապակենտրոն կառավարման ձեւով: Խալիկեանը յիշատակում է նաեւ թուրք պատմագրութեան տեսակէտը, այն է՝ թէ Ադանայի ջարդերը թուրք ժողովրդի բնական հակազդեցութիւնն էին քաղաքում կազմակերպուած հայերի ապստամբութեանը եւ թէ Դաշնակցութիւնն ու Հնչակեան կուսակցութիւնը յեղափոխութիւնից յետոյ մի կարճ ժամանակ էլ առերեւոյթ շարունակեցին զօրակցել Իթթիհատին, բայց յետոյ վերսկսեցին իրենց խափանարար գործունէութիւնը՝ նպատակ ունենալով զինել

1 Տե՛ս Dikran Mesrob Kaligian, Armenian Organization and Ideaology under Ottoman Rule, 1908-1914, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, (New Brunswick, USA and London, UK: Transaction Publishers), 2009, p. 37.

2 Տե՛ս նոյն տեղում, էջ 45:

եւ ապստամբութեան պատրաստել ժողովրդին: Նոյն պատմաբանների կարծիքով, Բալքանեան պատերազմը սկսելուն պէս, Դաշնակցութիւնը խզեց կապը Իթթիհատի հետ եւ սկսեց դիմումներ կատարել եւրոպական պետութիւններին, յատկապէս Ռուսաստանին՝ միջամտելու օսմանեան կառավարութեան մօտ եւ բարենորոգումներ պարտադրելու նրան: Նրանց կարծիքով Դաշնակցութեան նպատակը ընդհանուր ապստամբութիւն կազմակերպելն էր եւ դրա առիթը ներկայացաւ, երբ Թուրքիան Ա. Համաշխարհային Պատերազմի մէջ մտաւ:

Հայ եւ օտար պատմաբանները տարբեր եզրակացութիւնների են յանգում ՀՅԴ- Իթթիհատ յարաբերութիւնների խզման թուականի եւ պատճառների շուրջ: Խալիկեանը կարեւորում է հետեւեալ պատճառները. Իթթիհատի ներքին հակամարտութիւններ եւ ծայրայեղ ազգայնականների վերջնական յաղթանակ. Դաշնակցութեան հակառակութիւնը Իթթիհատին՝ Բալքանեան պատերազմը սկսելու համար (նրանով հանդերձ, որ Դաշնակցութիւնը կոչ էր արել հայ ժողովրդին բանակում ծառայելու եւ մասնակցելու պատերազմին) եւ վերջապէս, Իթթիհատի ծայրայեղ ազգայնական թեւի պետական հարուածը 1913-ին: Կարեւոր ազդակ էր նաեւ Իթթիհատի չկամութիւնը լուծելու հայերից խլուած հողերի հարցը: Թէ ճշգրիտ ո՞րն էր վերջին հաշւով որոշիչ ազդակը, Խալիկեանը ձեռնարկում է պեղել բոլոր հաւանական աղբիւրները՝ հայ-քրդական յարաբերութիւնները գծագրող փաստաթղթերից մինչեւ եւրոպական պետութիւնների տարուբերուող քաղաքականութեան ընթացքը, ինչպէս նաեւ Իթթիհատի ներքին անհամաձայնութիւնների դրդապատճառներն ու հետեւանքները: Հեղինակը միաժամանակ հաստատում է, որ Իթթիհատի արխիւների անհետացումն ու փճացումը պիտի սահմանափակի հետազօտութիւնը:

Այսպիսով՝ Տիգրան Խալիկեանը սկսում է իր երկար ճանապարհը՝ քակելու, բացելու պատմութեան հանգոյցներն ու լուսաւորելու մութ էջերը:

Թւում է թէ Իթթիհատը դատապարտուած էր հենց սկզբից: Նրա սխալ ճանապարհը սկսեց գծագրուել 1908-ի յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ: Ըստ Խալիկեանի պատճառն այն էր, որ Իթթիհատը իրական, համա-օսմանեան ուժ չէր ներկայացնում եւ շուտով էլ հակադիր ճակատների մասնատուեց. վարչական փորձի խիստ պակաս ունէր. ժողովրդին հարազատ ղեկավար դէմք չունէր իր շարքերում. յստակ էր, որ անկարող է յաղթահարել ժողովրդին տուած իր խոստումների եւ իր իսկ դրած նպատակների իրագործման դէմ ծառացած խոչընդոտները. առաջին իսկ ընտրութիւններին չկարողացաւ արգիլել սահմանադրութեան պաշտպանութեան տեսակէտից անբաղձալի տարրերի մուտքը պառլամենտ. եւ վերջապէս՝ Իթթիհատը իր մօտեցումների ու գործելակերպի մէջ անկեղծ չէր: Վերլուծելով այս կէտերը մէկ առ մէկ, Խալիկեանը գծում է պատմութեան այդ ճակատագրական եւ փոթորկին նախորդող ժամանակաշրջանում տիրող իրավիճակը: Տեսնում ենք թէ սահմանադրութեան վերահաստատումով շատ բան չէր փոխուել եւ տեղական ղեկավարութիւնը հազիւ էր կարողանում ու երբեմն չէր էլ փորձում իր հակահայ դիրքորոշումը Երիտթուրք յեղափոխութեան դիմակի տակ ծածկել: Խալիկեանի վկայութեամբ, Դաշնակցութիւնը այս ժամանակաշրջանում ինքնակազմակերպման եւ ինքնահզորացման գործին էր լծուած եւ ամենայն զգայնութեամբ փորձ էր անում յարաբերութիւն պահել ներքին պառակտումներից տկարացած Հնչակեան կուսակցութեան հետ:

Գրքի երկրորդ գլուխը ընդգրկում է Ադանայի ջարդերին հետեւող ժամա-

նակաշրջանը մինչեւ 1910-ի վերջաւորութիւնը, երբ Դաշնակցութիւնը Իթթիհատի հետ գործակցութիւնը շարունակելու կամ կասեցնելու որոշում պիտի առնէր: Ընդգրկուած է նաեւ հայերից խլուած հողերի խնդիրը, որ հեղինակը ներկայացնում է որպէս հայ ժողովրդի համար ամենացաւոտ հարցը եւ ՀՅԴ-Իթթիհատ յարաբերութիւնների տեսակէտից անկիւնադարձային: Խալիկեանը բացատրում է, թէ հայ գիւղացուց հողեր խլելը արդէն քաղաքներին էր հասել ու սուլթանների օրերից մնացած, շարունակւում էր կայսրութեան յետ-յեղափոխական շրջանում եւս: Եւրոպական պետութիւնների միջամտութեան կասեցման դրդապատճառների մէջ էլ ամենայաճախակին հայ գիւղացուն իր պապենական հողից զրկելն ու նրան որպէս ստրուկ ու մշակ հետզհետէ հարստացող ու մեծ հողատէր դարձող թուրքի ու քուրդի դուռը գցելն էր: ՀՅԴ- Իթթիհատ բանակցութիւնների արդիւնքում, որպէս հարցի լուծում որոշուեց յատուկ յանձնախումբ առաքել խնդրոյ առարկայ վայրերը: Յանձնախմբի մէջ ներառնուեցին նաեւ հայեր, որոնք քաջատեղեակ էին խնդրին. սակայն յանձնախմբի առաքումը այդպէս էլ չիրականացաւ: Իթթիհատը ո՛չ ուժն ունէր եւ ոչ էլ ցանկութիւնը հարուստ հողատէրերի դէմ ելլելու. միայն խօսքերով համոզում էր Դաշնակցութեան, թէ խնդրի ընդհանուր լուծումը ընթացքի մէջ է: Պարզ չէ՞ր, արդեօք, որ Իթթիհատը անկեղծ չէր, կամ բացարձակ խաբում էր: 1910-ի վերջաւորութեան, կառավարութեան յղած Դաշնակցութեան վերջնագիրը ցոյց է տալիս թէ հարցը իր լուծումը չի գտել[3]:

Մնացեալ հարցերի մէջ Խալիկեանի փաստարկութեամբ ակնյայտ տեղաշարժ էր սկսել: Կառավարութեան հետ Դաշնակցութեան համագործակցութեան արդիւնքում, որոշ չափով նուազել էր հայ գիւղերի վրայ յարձակումներն ու հայ գիւղացու կեղեքումը: Հետզհետէ փոփոխութեան էին ենթարկւում վարչակարգին պատկանող տեղական կառավարական պաշտօնէութիւնը եւ փոխարինւում աւելի բարիացակամ տարրերով: Մինչեւ անգամ պատժի էին ենթարկւում հայերի դէմ ոճիր գործողները: Դաշնակցութիւնը իշխանութեան հետ համագործակցում էր նոյնիսկ քրդական հարցում, երբ ցարական Ռուսաստանը քրդերի մէջ փորձում էր խլրտում առաջացնել ու իշխանութեան դէմ հանել: Քրդերին հայերի դէմ յարձակումների մղելով Ռուսստանը առիթ պիտի ունենար հայերին պաշտպանելու պատրւակով կառավարութեան գործերին միջամուխ լինել:

Նման դրական տեղաշարժերի կողքին, զարգանում էին նաեւ բացասական երեւոյթներ: Փոխանակ «Համիդիէ» կոչուած, հայերին միշտ վտանգ բերող, քրդական անկանոն զօրախմբերը ցրելու, որը Դաշնակցութեան պահանջներից մէկն էր, իշխանութիւնը վերակազմակերպել էր նրանց, անուանափոխել եւ օգտագործում էր իբր ցեղային զօրամասեր: Դաշնակցութեան բողոքի ու երկար բանակցութիւնների արդիւնքում, Իթթիհատը ի հարկէ չհամաձայնուեց ցրել այդ զօրամասերը, բայց խոստացաւ պայքարել հակասահմանադրական եւ յետադիմական ուժերի դէմ: Բացասական երեւոյթ էր նաեւ քրդերի մէջ ծայր առած դժգոհութիւնները ընդդէմ իշխանութեան, թէ ինչո՞ւ է նա «պաշտպանում» հայերին եւ իսլամ ու քրիստոնեայ քաղաքացիներին հաւասար դատում:

Երկիրը անհանգիստ վիճակ ունէր: Սահմանադրութեան վերահաստատումը հայերի համար մեծ բարեփոխումներ չէր խոստանում: ՀՅԴ 1911-ի ընդհանուր ժողովը քննարկելով Երիտթուրքերի հետ կապը կտրելու եւ ընդդիմութեան

3 Տե՛ս նոյն տեղում, էջ 64:

միանալու հարցը, որոշում է եւս մէկ աւոիթ տալ՝ այնուամենայնիւ, լիազօրելով Արեւմտեան Բիւրոյին, խզելու յարաբերութիւնները եթէ խոստումների դրժումը շարունակուի: Գրքի երրորդ գլուխը այս դէպքերի ընթացքին է հետեւում:

Դժուարին ժամանակներ էին երկրի իշխանութեան եւ Իթթիհատի ղեկավարութեան համար. հսկայ կայսրութիւնը վարելու նրանց անկարողութիւնը դժգոհութեան ալիք էր առաջացրել ամէն կողմ: Մանաւանդ՝ գլուխ էին բարձրացրել պահպանողականները եւ սպառնում էին տապալել սահմանադրական վարչակարգը: Ի տես այդ իրադարձութիւնների, ՀՅԴ Արեւմտեան Բիւրոն իր զօրակցութիւնն էր յայտնում Երիտթուրքերի սահմանադրութեան պաշտպան թեւին: Այս փոթորկոտ շրջանում էր, որ Դաշնակցութեան ներկայացուցիչները Սալոնիքում եւ ապա Պոլսում հանդիպում են Թալէաթի եւ Նազըմի հետ եւ դարձեալ բարենորոգումների պահանջ ներկայացնում մանրամասն կէտերով: Իթթիհատը ընդունելով, որ հնարաւորութիւնը չունի խնդիրը հետապնդելու, առաջարկում է պահանջները ներկայացնել պառլամենտին:

Ժամանակաշրջանը նաեւ յղի էր միջազգային կարեւոր իրադարձութիւններով: Մեծ պետութիւնները, Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Աւստրո-Հունգարիա եւ Իտալիա, դաշնակիցներ գտնելու եւ հակադիր ճակատներ կազմելու միտումներ էին ցոյց տալիս: Միեւնոյն ժամանակ, նրանց մէջ մրցակցութիւն էր գնում մէկը միւսից աւելի շնորհներ ձեռք բերելու Օսմանեան կայսրութեան մէջ: Առիթներից մէկն էլ Իթթիհատի որոշումն էր՝ կայսրութեան ծովոյժը զօրացնել ու այժմէականացնել եւ եւրոպական պետութիւններից պարտքեր վերցնելով երկրի տնտեսութիւնը բարելաւել: Աստիճանաբար յայտնի էր դառնում, որ Երիտթուրքերը դէպի Գերմանիա են թեքւում եւ նրա օգնութիւնն են նախընտրում:

1912-ի սկզբից արդէն ՀՅԴ-Իթթիհատ յարաբերութիւնները անբարեյոյս վիճակի մէջ էին: Երբ հայերի իրավիճակի բարելաւման հարցերը գոհացուցիչ առաջադիմութիւն չէին արձանագրում, համագործակցութիւնը անիմաստ էր: Բայցեւայնպէս, այս խնդրում Դաշնակցութեան ղեկավարութիւնը միակամ չէր, որի պատճառով էլ որոշումը մինչեւ աշուն հետաձգուեց: Աշնանը իշխանութեան գլուխ անցաւ Իթիլաֆը, որ Երիտթուրքերի դէմ կազմուած, հակոտնեայ գաղափարներով ու տարբեր շահախնդրութիւններով ամէն տեսակ տարրերից բաղկացած մի կուսակցութիւն էր:

«ՀՅԴ- Իթթիհատ յարաբերութիւնների վախճանը» վերնագիրը կրող գլխում, Խալիկեանը տալիս է տիրող իրավիճակի մանրամասնութիւնները՝ պառլամենտի լուծարում եւ նոր ընտրութիւններ եւ այդ ընթացքում Իթթիհատի վարած ստոր քաղաքականութիւնը հայ թեկնածուների դէմ, Իթթիհատ - Իթիլաֆ հակամարտութիւն եւ վերջապէս, Դաշնակցութեան քաղաքականութիւնն ու վարած բանակցութիւնները այդ ժամանակաշրջանում: Խալիկեանը դիտել է տալիս, թէ Երիտթուրքերի հետ յարաբերութիւնների խզման վերջնական որոշումը արդիւնքն էր ժողովրդի մէջ տիրող յուսախաբութեան եւ դժգոհութիւնների: Դաշնակցութիւնը զգում էր, որ կորցնում է ժողովրդի հաւատքն ու վստահութիւնը, քանի որ չի կարողանում ի կատար ածել իր տուած խոստումները, խոստումներ, որ տուել էր Իթթիհատին՝ վստահելով ու նաեւ այն համոզումով, որ ինքը պառլամենտական ընտրութիւններում յաղթական դուրս կը գայ եւ իր կարեւոր ներկայութեամբ այնտեղ, ի վիճակի կլինի խնդիրներ լուծել: Դիպուկ է Խալիկեանի կարծիքը, թէ

Դաշնակցութիւնը, որ տարիների փորձ ունէր այլ քաղաքական կուսակցութիւնների հետ Թուրքիայում, Իրանում եւ Ռուսաստանում, պիտի կարողանար այս ծայրայեղ լաւատեսութեան չգնալ[4]: Բայց Խալիկեանը մատնանշում է նաեւ այն պարագան, որ գործող ուժերի մէջ - մեծ մասամբ պահպանողական, հին վարչակարգի պաշտպաններ եւ շեշտուած հակահայեր - Իթթիհատը չարեաց փոքրագոյնն էր[5]: 1912-ի Օգոստոսին նրա հետ համագործակցելու դուռն էլ փակուեց եւ Դաշնակցութիւնը յայտարարեց ՀՅԴ-Իթթիհատ համագործակցութեան խզումը: Որոշում էր կայացուել երկրում գործող ուժերի եւ քաղաքական խմբակցութիւնների հանդէպ չէզոք դիրք որդեգրել:

1912-ի Սեպտեմբերից արդէն զգալի էր անհանգստութիւնը Բալքանեան նահանգներում: Հոկտեմբեր 8-ին սկսեց պատերազմը՝ նոր մարտահրաւէրներ դնելով Դաշնակցութեան առջեւ: Նա պիտի կարողանար ներդաշնակել հակամարտութիւնների տարբեր կողմերում գործող կուսակցական մարմինների գործունէութիւնը: Միեւնոյն ժամանակ աշխատանք էր տարւում կառավարութեանը բարենորոգումներ պարտադրելու, իսկ թէ ի՞նչ միջոցով, միատեսակ չէր մտածում Դաշնակցութեան ղեկավարութիւնը. բալքանեան օրինակով ուժ գործադրե՞լ եւ յեղափոխական աքտերի դիմե՞լ, թէ՞ սպասել, քանի որ ստեղծուած պայմաններում ուժի գործադրումը կարող էր վտանգել ամբողջ հայութեանը:

Բալքանեան պատերազմի աւարտը Դեկտեմբերին եւ դրան հետեւող խաղաղութեան բանակցութիւնները բարենորոգումների հարցը բարձրացնելու նոր առիթ էին: Դաշնակցութիւնը այլեւս Իթթիհատի վրայ յոյս չունէր եւ ապաւինել էր դրսի ճնշումներին. մինչդեռ եւրոպական պետութիւնների իւրաքանչիւր միջամտութիւն ընդվզումի մի նոր ալիք էր բարձրացնում հանդէպ մի ժողովրդի, որ միայն սահմանադրութեան խոստացած հաւասար իրաւունքներին էր ձգտում[6]: Այս ընթացքում էր որ Երիտթուրքերի ազգայնական թեւը պետական հարուածով իշխանութեան տիրացաւ, իսկ բարենորոգումների բանակցութիւնները դեռ շարունակւում էին:

Որքան որ Անգլիան անտարբեր էր հայկական բարենորոգութիւնների նկատմամբ, նոյնքան հետաքրքրութիւն եւ շահագրգռութիւն էր ցոյց տալիս Ռուսաստանը. այնքան որ տպաւորութիւն էր ստեղծւում, թէ Ռուսաստանը ցանկութիւն ունի Օսմանեան կայսրութիւնից խլելու հայկական վիլայէթները: Դա ի հարկէ հայ ժողովրդի համար շահաւէտ լուծում չէր եւ Դաշնակցութեան վերջին նպատակն էլ հայկական վիլայէթների համար ինքնավարութիւն ստանալն էր եւ ո՛չ թէ դրանք Ռուսաստանի տիրապետութեան յանձնելը: Խալիկեանը տալիս է բարենորոգումների գործադրման համար եւրոպացի հսկիչների ընտրութեան եւ գործուղման շուրջ եւրոպական պետութիւնների ներքին մրցակցութիւնը եւ օսմանեան կառավարութեան հետ նրանց վարած քաղաքականութիւնը: Դրութիւնը, սակայն, գնալով վատթարանում էր: Թուրք մամուլը թունաւոր յօդուածներ էր հրապարակում հայերի դէմ եւ ամբաստանում նրանց ապստամբութեան դիմելու եւ մուսուլմանների դէմ զէնք վերցնելու մէջ: Յաճախակի էին դարձել հայերի սպանութիւնները եւ հայկական գիւղերի կողոպուտը: Մահուան սպառնալիքներ էին տեղում յատկապէս ՀՅԴ ղեկավարների, Զաւէն Պատրիարքի եւ Պօղոս

4 Տե՛ս նոյն տեղում, էջ 131:
5 Տե՛ս նոյն տեղում, էջ 137:
6 Տե՛ս նոյն տեղում, էջ 154:

Նուպար Փաշայի հասցէին: Վերջինս 1912-ից գլխաւորում էր հայկական պատուիրակութիւնը, որ Փարիզում պիտի հայկական հարցի շուրջ եւրոպական պետութիւնների մօտ քարոզչութիւն կատարէր: Կոտորածներ էին նախատեսւում եւ կառավարութիւնը մերժում էր հայերի ապահովութեան համար լուրջ քայլեր առնել:

Յարաբերութիւնները աւելի սրուեցին, երբ լուր տարածուեց, թէ 1913-ի Սեպտեմբերին կայացած հնչակեանների 7-րդ պատգամաւորական ժողովում որոշում է կայացուել մահափորձի ենթարկել Թալէաթին եւ միւս Երիտթուրք ղեկավարներին: Որոշումը ի հարկէ չգործադրուեց, բայց թրքական փաստարկութեան մէջ դա օգտագործուեց իբրեւ հայերի դաւաճանութեան ապացոյց:

Քաշքշուքի եւ յետաձգումների էին ենթարկուել եւրոպացի հսկիչների ընտրութիւնը եւ նրանց աշխատանքի դաշտն ու իրաւունքները ճշտելու հարցերը: Իթթիհատը վտանգաւոր միջամտութիւն էր նկատում այս բոլորը: Կայսրութիւնը արդէն հսկայ հողատարածքներ էր կորցրել, իսկ հայկական հարցի լուծումը նոր կորուստների վտանգ էր սպառնում: Խալիկեանը ներկայացնում է թուրք ղեկավարների մտայնութիւնը եւ եւրոպական պետութիւնների մէջ դաշնակից գտնելու եւ նրա միջոցով երկրի տարածքային ամբողջութիւնը ապահովելու ձգտումը: Մինչ այդ, եւրոպական պետութիւնները շարունակում էին հայկական բարենորոգումները որպէս խաղաքարտ գործածել կայսրութեան մէջ իրենց շահերը ապահովելու համար: Այդպիսով, տարուող բանակցութիւն-առեւտրի արդիւնքում, բարենորոգումների փաստաթղթի վերջին տարբերակը բոլորովին նման չէր սկզբում ներկայացուածին: Վերջապէս, ինչպէս գիտենք, 1914-ի Մայիս 3-ին հսկիչներ Ուեստենենքը եւ Հօֆֆը Պոլիս հասան իրենց նախնական աշխատանքները կատարելու եւ վարչական կազմերը լրացնելու համար: Թէ՛ Դաշնակցութիւնը եւ թէ Պատրիարքարանը աշխատանք էին տանում հայ լաւագոյն թեկնածուներին կազմերի մէջ մտցնելու, բայց այդտեղ էլ խօսք ունէր թուրք կառավարութիւնը իրեն յարմար մարդիկ նշանակելու: Աշխատանքը ամիսներ տեւեց, եւ երբ հսկիչները պատրաստւում էին իրենց աշխատավայրերը մեկնել, երկրում ընդհանուր զօրակոչի լուրեր տարածուեցին: Վահագն Տատրեանից մէջբերելով, Խալիկեանը նշում է թէ բարենորոգումները չկատարուեցին, Համաշխարհային Պատերազմի պայթումը խանգարեց, բայց թուրք ղեկավարութեան մէջ մնաց մի դառնութիւն եւ ոխ դէպի հայ ղեկավարները, որոնք երկրի ծանր պայմանները անտեսելով պնդեցին իրենց պահանջների վրայ եւ եւրոպացիների միջամտութեանը դիմեցին: Այդ մասին հետագայում արտայայտուեց նաեւ ինքը Թալէաթը[7]:

Պատերազմին նախորդող ամիսները Իթթիհատի համար ուժերի կենտրոնացման եւ ազդեցութիւնների գօտիների հաստատման ծառայեցին թէ՛ նորընտիր խորհրդարանում եւ թէ՛ կառավարութեան մէջ: Ընտրութիւնների ընթացքը արդէն ցոյց էր տուել, որ Իթթիհատը խուսափում է ընթացք տալ հայ հոգեւորական եւ կուսակցական ղեկավարութեանը եւ եթէ ըստ սահմանադրութեան պէտք էր որ հայերը ներկայացուցչութիւն ունենային, Իթթիհատը փորձում էր դա ապահովել իր համար ընդունելի կամ ինչպէս հայերն էին որակում՝ թրքամէտ կամ դաւաճան հայերով: Իթթիհատը Դաշնակցութեանն արդէն նայում էր իբրեւ հակառակորդ եւ ամբաստանում նրան ընտրութիւնները բոյկոտելու եւ բարենորոգումների բանակցութիւնների մէջ կարծր դիրքորոշում ցուցաբերելու համար: Կառավարութիւնը

7 Տե՛ս նոյն տեղում, էջ 209:

գիտէր նաեւ, որ Դաշնակցութիւնը սկսել է գաղտնի զինել հայերին եւ նրանց ինքնապաշտպանութեան վարժեցնել[8]:

Յարաբերութիւնները խզուած էին, բայց Իթթիհատը չյապաղեց իր ներկայացուցիչները ուղարկելու Էրզրում (Կարին), ուր ՀՅԴ ընդհանուր ժողովն էր տեղի ունենում: Պատերազմի վտանգի պատճառով, ժողովը ցրուել էր ժամանակից շուտ, բայց հանել էր իր բանաձեւը՝ շարունակելու աշխատել իբրեւ Իթթիհատի հակաժողովրդավարական եւ ծայրայեղական իշխանութեան դէմ անզիջում հակառակորդ եւ անկաշառ քննադատ: Եւ դա որպէս հետեւանք հայերի եւ ընդհանրապէս՝ ոչ-մուսուլման ժողովուրդների հանդէպ կառավարութեան ցուցաբերած խտրական եւ նեղմիտ վերաբերմունքի ու հալածանքների եւ հայկական բարենորոգումների նոյնիսկ վերջին՝ կոտորակուած տարբերակը չգործադրելու: Ժողովից յետոյ Էրզրումում մնացել էին մի քանի ղեկավարներ առկախ հարցերը կարգադրելու համար: Դրանցից՝ Ռոստոմը, Ակնունին եւ Վռամեանը հանդիպեցին թուրք ներկայացուցիչների՝ Բահաէդդին Շաքիրի եւ Նաջի Բէյի հետ: Այն հարցումին, որ եթէ Ռուսաստանը կայսրութեան վրայ յարձակուի, ի՞նչ դիրք կը բռնի Դաշնակցութիւնը, պատասխանուել էր, թէ ընդհանուր ժողովը արդէն բանաձեւ է հանել, որ պատերազմի պարագայում երկիրը պիտի ունենայ իր կազմակերպուած բանակը, բայց Դաշնակցութիւնը մտահոգ է բանակում եւ զօրակոչի ընթացքում հայերի դէմ կատարուող անարդար եւ խտրական վերաբերմունքից եւ որոշում է տուել դրանք վերացնելու համար քայլեր առնել: Թուրք ներկայացուցիչները մանրամասն ներկայացրել էին կառավարութեան քաղաքական ծրագիրը՝ հիմնուած այն համոզման վրայ, որ Գերմանիան յաղթական պիտի դուրս գայ պատերազմից եւ նրա հովանաւորութեամբ կառավարութիւնը պիտի կարողանայ իրագործել իր քաղաքական նպատակները: Այդ նպատակների մէջ էր մտնում Ռուսաստանի տիրապետութիւնը Կովկասից վերացնելը, որի համար ռուսահայերի համագործակցութեան, այսինքն՝ անհրաժեշտ պարագայում ռուս իշխանութեան դէմ ապստամբելու եւ թուրքերին միանալու երաշխիքն էին ուզում: Դրա փոխարէն, խոստանում էին Ռուսահայաստանին տալ ինքնավարութիւն՝ որի չափն ու տեսակը պիտի համապատասխանէր ծրագրի իրագործման մէջ հայերի բերած մասնակցութեան չափին: Ի հարկէ, դաշնակցական պատգամաւորները պատասխանել էին, թէ իրենք իրաւասութիւն չունեն կուսակցութեան կողմից խոստումներ տալու կամ հարցումին պատասխանելու, սակայն դիտել էին տուել, թէ հայերի նկատմամբ Իթթիհատի ցուցաբերած վերաբերմունքը վերջին տարիներին բոլորովին խափանել է ռուսահայոց լաւատեսութիւնը դէպի սահմանադրական վարչակարգը եւ ռուսահայերը հիմք չունեն թուրքերին վստահելու: Նրանք նոյնպէս կրկնել էին Դաշնակցութեան պահանջներն ու ակնկալիքները իշխանութիւնից, որոնք չէին կատարուել եւ եթէ իշխանութիւնը ցանկանում էր սիրաշահել հայերին, ինչպէս անում էր ռուսը իր հպատակների նկատմամբ, լաւ կլինէր որ այդ սպասումները իրագործէր: Թուրքերը դժգոհ եւ անորոշ հեռացել եւ զեկուցել էին Թալէաթին, որը եւ իր դժգոհութիւնն էր յայտնել պառլամենտի հայ ներկայացուցիչ Արմէն Գարոյին:

Սրուած մթնոլորտը փարատելու համար, Դաշնակցութիւնը պարտաղրուեց խորհրդակցական ժողով հրաւիրել՝ ձեւակերպելու համար թուրքերին տալիք

8 Տե՛ս նոյն տեղում, էջ 216:

պատասխանը, բայց վտանգաւոր իրավիճակը՝ թէ՛ երկրում եւ թէ՛ միջազգային ասպարէզում ու հայութեան սահմանի երկու կողմում եւ երկու վտանգի մէջ գտնուելու իրողութիւնը որեւէ համաձայնութեան չբերեց մասնակիցներին, որոնց մէջ միակ ոչ-դաշնակցականը Գրիգոր Զոհրապն էր: Որոշուեց հակադիր կարծիքները յղել Բիւրոյին առ ի քննութիւն: Ինչ որ բոլորը համաձայն էին, գրում է Խալիկեանը, այն էր, որ թրքահայութիւնը իր պարտականութիւնը պիտի սեպի մասնակցել երկրի պաշտպանութեանը, զինուորագրուի թուրք բանակում եւ վճարի պատերազմի յատուկ տուրքերը[9]:

Վեց գլուխներից բաղկացած գրքի բովանդակութիւնը ամբողջացնող «Եզրակացութիւն»ը գալիս է համագումարի բերելու Խալիկեանի տարիների ուսումնասիրութեան եւ օգտագործած բազմակողմանի աղբիւրների արդիւնքները: Որպէս հիմք ու նպատակ, Խալիկեանը խնդիր էր դրել հանգամանօրէն գծագրել ՀՅԴ-Իթթիհատ յարաբերութիւնների ընթացքն ու աւարտը: Իր ճանապարհի այս վերջին հանգրուանում, նա տրամաբանական է գտնում յարաբերութիւնների սկզբնական փուլը եւ Իթթիհատին դիտում է որպէս Դաշնակցութեան բնական դաշնակից՝ երբ հարցը կայսրութեան մէջ սահմանադրութեան վերահաստատումն էր եւ հայ ժողովրդի ազատագրումը սուլթանական ծանր լուծից: Ըստ Խալիկեանի, Դաշնակցութիւնը իր ամբողջ վարկն ու հնարաւորութիւնները սահմանադրական կառավարութեան յաջողութեանը տրամադրեց եւ քանի որ յետ-յեղափոխական կառավարութիւնների մէջ եթէ ոչ տիրապետող, գոնէ միշտ մեծամասնութիւն են եղել Երիտթուրքերը, դրանով էլ բացատրւում է Դաշնակցութեան պաշտպանութիւնը այդ կուսակցութեան եւ համագործակցութիւնը նրա հետ՝ անգամ Աղանայի ջարդերից յետոյ: Խալիկեանը բերում է Դաշնակցութեան հակառակորդների ամբաստանութիւնը, թէ իբր դիրքերի հասնելու, երկրում բարձր պաշտօններ զբաղեցնելու եւ խորհրդարանում աթոռներ գրաւելու մոլուցքն էր, որ Դաշնակցութեանը այդ համագործակցութեան մղեց: Ի պատասխան այդ ամբաստանութեան, Խալիկեանը յիշեցնում է, թէ համագործակցութիւնը կասեցնելու խիստ կողմնակից էր Արեւմտեան Բիւրոն, որը այդ պաշտօններին հասնելու առիթն ու թեկնածուներն ունէր. Արեւելեան Բիւրոն էր, որ յարմար էր նկատում դեռ շարունակել:

Աւելին, Խալիկեանը պարզում է, որ տասնամեակներ շարունակ Դաշնակցութեան դէմ ուղղուած երկու քննադատութիւններ իրար են հակասում եւ իրար բացառում: **Մէկը Դաշնակցութեանը ամբաստանում է Երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ ֆիդայական խմբերի ցրման եւ ուրեմն 1915-ին հայ ժողովրդին անպաշտպան թողնելու համար ու շարունակում, թէ Դաշնակցութիւնը վստահեց հակահայ եւ ցեղապաշտ Իթթիհատին, յետոյ էլ օտար պետութիւնների միջամտութեանը հաւատք ընծայեց: Միւս կողմից, թրքական տեսակէտը պնդում է, թէ Դաշնակցութեան համագործակցութիւնը Իթթիհատի հետ, սահմանադրութեան պաշտպանութիւնը եւ պառլամենտական գործունէութիւնը կեղծ էին եւ առերեւոյթ: Բուն նպատակը յարմար պահին յեղափոխութիւն կազմակերպելն էր:** Այդ տեսակէտի մէջ, ի հարկէ, անտեսւում է Երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ ֆիդայական խմբերի կազմալուծումը Դաշնակցութեան կողմից եւ շեշտը դրւում է ժողովրդին զինելու Դաշնակցութեան հետագայ նախաձեռնութեան վրայ առանց նկատի ունենալու, որ Դաշնակցութիւնը պարտաւոր էր այդ քայլին դիմելու, քանի

9 Նոյն տեղում, էջ 222:

որ Իթթիհատն անկարող էր հայ ժողովրդին քրդական յարձակումներից պաշտպանել: Խալիկեանի՝ յատկապէս դաշնակցական աղբիւրների եւ արխիւների մէջ կատարած ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս այն իրողութիւնը, որ **Դաշնակցութիւնը կանգնած է եղել երկու անբարենպաստ ընտրութիւնների առջեւ: Պիտի վնասէր ո՛ր ճամբան էլ ընտրելու լինէր՝ համագործակցութիւն սահմանադրական Իթթիհատի կամ ընդդիմութեան հետ:** Առաջինի արդիւնքը չարդարացրեց թափուած ջանքերը, իսկ ընդդիմութիւնը լեցուն էր իսլամիստ ծայրայեղականներով:

Մերժելով այն միտքը, թէ Դաշնակցութիւնը կոյր հաւատքով համագործակցեց Իթթիհատի հետ, Խալիկեանը նշում է, թէ գուցէ կարելի է ասել Դաշնակցութիւնը մի քիչ երկար պահեց այն յոյսը, թէ յառաջդիմական հոսանքը պիտի յաղթի: Իսկ Դաշնակցութեան սերտ յարաբերութիւննե՞րը Թալէաթի հետ: Չէ՞ որ այսօր հետադարձ հայեացքով ասում ենք թէ Թալէաթը Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր հեղինակներից էր, ուրեմն Դաշնակցութիւնը ինչպէ՞ս չկռահեց նրա յետին նպատակները: Խալիկեանը հաւանական է համարում, որ Թալէաթը սկզբում անկեղծ էր այդ յարաբերութիւնների մէջ: Նա շատ դէպքերում նոյնիսկ պաշտպանում էր Դաշնակցութեան պահանջները: Նա սկզբում կողմնակից էր նաեւ կայսրութեան բազմակիութեան գաղափարին: Բալքանեան եւ Իտալիա-Թուրքիա պատերազմների պարտութեան արդիւնքում էր հաւանաբար, որ նա յարեց Գեօքալփի եւ Նազիմի գաղափարներին, այն է՝ յենուել թրքական ուժի վրայ միայն, եւ շեշտուած հետեւորդը դարձաւ թուրք ազգայնականութեան:

Խալիկեանը հաւատացած է, որ Դաշնակցութեան համար հողազրկուած գիւղացիութեան հարցը շեշտուած կարեւորութիւն ունէր եւ հարցի լուծման չհասնելը յարաբերութիւնների խզման հիմնական պատճառներից մէկն էր: Դաշնակցութիւնը պայքարում էր համիդեան քաղաքականութեան դէմ՝ քրդերի միջոցով իւրացնելու հայ գիւղացու հողն ու ունեցուածքը, պարտադրելու նրան լքել ծննդավայրը՝ հայրենիքը, այդպիսով՝ հայազրկելու Արեւմտեան Հայաստանը: Քուրդ քոչւորներին հայկական գիւղերում բնակեցնելն էլ նոյն քաղաքականութեան դրսեւորումն էր: Դաշնակցութիւնը պայքարում էր միջոցներ ստեղծելու ու հայ գիւղացուն իր տեղում պահելու համար, այլ խօսքով՝ փորձում էր հայկական հարցի հնարաւոր լուծման սիրոյն, Արեւմտեան Հայաստանը հայերով բնակեցուած պահել: Հողերի հարցը Դաշնակցութեան կարեւոր պահանջներից էր սահմանադրական կառավարութիւնից, որ այդպէս էլ լուծումի չհասաւ:

Խալիկեանը Դաշնակցութեան մտադրութիւնների մէջ տեսնում է յարաբերութիւնների արմատական խզման միտում դեռ 1912-ից, երբ պարզ էր որ հողային հարցը չպիտի լուծուի: Յարաբերութիւնն ու համագործակցութիւնը յամենայնդէպս շարունակուեցին, որովհետեւ ինչպէս Խալիկեանն է ասում, բարենորոգումների այլ կէտերի շուրջ զգալի էր որոշ առաջխաղացք. յետոյ, բացի այդ, ուրիշ այլընտրանք էլ չկար:

Խալիկեանը իր աշխատասիրութիւնը վերջացնում է հետեւեալ պարբերութիւնով, որ մէջբերում եմ մօտաւոր թարգմանութեամբ: «Ուրեմն, Էրզրումի հանդիպումը ՀՅԴ-ՄՅԿ (Իթթիհատ - Ռ. Փ.) յարաբերութեան վերջին արարն էր: Երբ երկու կուսակցութիւնները նորից հանդիպեցին, դա այն ժամանակ էր, երբ մէկը առաջնորդում էր ցեղասպանութեան քաղաքականութիւնը ընդդէմ հայ ժողովրդի, որի պաշտպանութեան համար երդում էր տուել միւսը: Արդիւնքը այն

ոճիրն էր, որ պատերազմի ծանր մշուշը ճեղքելով աշխարհի մամուլի առաջին էջերին հասաւ»[10]:

Աշխատասիրութիւնը յաջողուած է:
Տիգրան Խալիկեանը կարողացել է լուծել իր առջեւ դրուած խնդիրները:

Դժկամութեամբ, բայց հարկադրաբար, պիտի ասեմ, որ գոյութիւն ունեն մեծ մասամբ բովանդակութեան չառնչուող մանր բացթողումներ, որոնք ցանկանում եմ մատնանշել ո՛չ թէ խիստ քննադատի գրչով այլ պարզապէս սրտցաւութեամբ, քանի որ վստահ եմ, որ գիրքը փնտրուած ընթերցանութիւն եւ հետագայ ուսումնասիրութիւնների աղբիւր պիտի լինի եւ պիտի տպագրուի երկրորդ ու երրորդ անգամ... Դա անշուշտ հեղինակին սրբագրութեան առիթ կը տայ: Նախընտրում եմ նշումներս կատարել անգլերէնով :

The primary goal of this article was to introduce the book, or at least its focus and main thrust, to Armenian readers. There is no doubt that Dikran Kaligian has achieved much more than just a comprehensive study of an important period of Armenian history with the ARF-CUP relations as its driving force. During my reading, however, I came across some discrepancies, mostly mechanical that I want to bring to the author's attention hoping that he will be willing to attend to them in future printings.

1. The index needs more work. Some names are missing and page numbers for some do not correspond with page numbers in the text. I would not put the ARF in the index. There is a mention of it more frequently than it has come in the index. Besides, the book is about the ARF, and there is no need to include it in the index and take up almost a column out of a two-column, 6 page index. So is the case with the CUP.

2. It would have been desirable to use diacritics or Turkish spelling for Turkish names uniformly and consistently regardless of the source whence the name has come. For example, c and j are used interchangeably for the j sound. The correct form would be Naci or Cavid, in other places j is used for the same sound. Or why Mu and not Mush just like there is Bashkala and not Bakala or Marash and not Mara?

3. The spelling of Armenian proper names should be kept the same all over the text. Dashnaktsutiun is the correct form, not Dashnakzutiun. And why Rupen Der Minassian versus Anahide Ter Minassian?

4. Sometimes the text becomes choppy because of the abundance of long quotations interrupted with short passages.

5. The quotation from Varantian, "A heavy shadow fell on the Young Turk 'Republic'...." did not sound right to me. So I checked the original, which is, according to my source, from page 201 of Varantian's History of the ARF. The word is Huriet that does not translate into Republic.

I stop here and whish Dikran Khalikian a successful career and perseverance in his valuable contribution to the field of Armenian studies.

Դոկտ. Ռուբինա Փիրումեան (Լոս Անջելես)

10 Տե՛ս նոյն տեղում, էջ 236: